<<էդիտ Պրինտ>> հրատարաչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները,կրթական գործնեությունը

Հաստատություն՝ 143մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Նարինե Խաչատրյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն.....3

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման
առանձնահատկությունները,կրթական գործնեությունը.....5

Պարապմունքի պլան.....

Հանդես <<Հարության տոն>> Զատիկ.....

Եզրակացություն.....

Գրականության ցանկ.....

Ներածություն

Ի՞նչ է ծեսը, ծիսակարգը և սովորույթը:Դրանց դերն ու նշանակությունը

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը:

Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգութանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:

Սուրբ Ծնունդ-Նոր տարի

143 մսուր մանկապարտեզում Սուրբ Ծնունդ-Նոր տարի սկսում ենք երգեր ու պարեր սովորելով: Միասին սովորում ենք ավանդական, ծիսական տոնական երգեր, պարերգեր՝ ծանոթանալով ամեն մի երգի, պարի պատմությանը:Որից հետո տեղի ունեցավ միջոցառումը:Նշեմ, որ ունեցանք այս տարի նորություն՝ տեսազանգ Ձմեռ պապիկի հետ, սաները զարմացած աչուկներով նայում էին էկրանին, իսկ Ձմեռ պապը նրանց հետ զրուցում էր, մեկ էլ հանկարծ հայտնվեց ու բաժանեց նվերները՝ երեխաները երգեցին պարեցին պատասղանեցին Ձմեռ պապիկի տված հանելուկներին: Այս ողջ միջոցառումը սաների մոտ ձևավորում, ապա և զարգացնում է կարողություններ ու հմտություններ, ինչպես նաև բացում գիտելիքի շտեմարանի այս դուռը դեպի հայ ավանդական ամանորյա սովորույթների ու ավանդույթների ակունքները:

Բարեկենդան

Բարեկենդան նշանակում է բարի կենդանություն: Ուրախության, զվարճանքի ծես է, որը կապված է գարնան սկսելու հետ: Ծեսի նպատակն է զվարճանալու, ուրախանալու, հրճվելու միջոցով վերակենդանացնել մարդուն, դիմավորել բնության զարթոնքը: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու շարժական տոներից, նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պաս ընկած ժամանակաշրջանը: Պատրաստում ենք Ուտիս տատ և Ակլատիզ: Ուտիսը մեզ անընդհատ ասում է, որ յուղոտ ուտելիքներ ուտենք, իսկ Ակլատիզը՝ հակառակը: Ակլատիզը պատրաստում ենք սոխի գլխից, որի վրա խրում ենք չորս սպիտակ և երեք սև փետուր, որոնք խորհրդանշում են սև հողը և սպիտակ ձյունը: Ակլատիզի պարանոցից կախում ենք քարեր և կծու պղպեղ, որ եթե յուղոտ բան ուտի, քարն ընկնի գլխին, և բերանն այրվի պղպեղով: Յոթ փետուրները խորհրդանշում են յոթ շաբաթները, որոնք ամեն շավաթ սաները հերթով պոկում են, իսկ վերջում Ակլատիզը թռչուն է դառնում և գնում Բուն բարեկենդանի օրը ընդունված էր երեկոյան խաշած ձու ուտել՝ այդպիսով փակելով խրախճանքը:

Բերաններս փակում ենք սպիտակ ձվով:
Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու:

. Բուն Բարեկենդանի նախորդող օրը ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում մինչև քառասունօրյա պասի ավարտը: Սա է Բարեկենդանը...

Ծաղկազարդ

Ծաղկազարդ (ծառզարդար, ծառկոտրուկ), գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն, որին հաջորդում է Ավագ շաբաթը:

Կատարվում է Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»

Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ: Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն:

Տոնի արմատներն ու խորհուրդը: Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը նվիրված է եղել ջրի և անձրևի աստվածուհի Նարին: Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր: Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում Նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին: Ծեսի մաս կազմող տիկնիկը ունի տարբեր անուններ՝ Նուրի, Հուրի, Խուճկուրուրիկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա և այլն[2]:Ծաղկազարդին բաժանվող ուռենու ճյուղեր:Ծաղկազարդը եղանակի՝ գարնան պաշտամունքի տոն էր: Այն նվիրված էր ոչ միայն ջրին, այլև ծառին ու ծաղկունքին: Ծառի պաշտամունքը փոխանցվել է սերնդեսերունդ և համարվել բնության կենդանության ու վերապրումի արգասիք: Տոնի հիմքում ընկած է նաև Կենաց ծառի գաղափարը: Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերություն: Դրա բարձրագույն նպատակը անմահությունն է:Տիեզերական կամ Կենաց ծառի գաղափարն է ունեցել նաև Ամանորի տոնածառն ու Վարդավառի խնդումը: Ամանորին ծառը զարդարել են չրերով ու մրգերով, իսկ Ծաղկազարդին՝ փնջած ձվերով, որոնք ունեցել են նաև

չարխափան նշանակություն: Ծաղկազարդին ընդունված է եղել ծառերը զարդարել գունավոր լաթերով: Այդ պատճառով է, որ տոնը ստացել է Ծառզարդար անվանումը:

Հետագայում ծառի պաշտամունքը շարունակվեց նաև քրիստոնեական շրջանում: Սրա ապացույցն են «Տաճար մայրիի» (անտառի տաճար) անունը ստացած եկեղեցին Խոսրովի արգելոցում:

Քրիստոնեության ընդունումից հետո տոնը հարմարեցվել է քրիստոնեության գաղափարախոսությանը և նշվել որպես Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելու օր, երբ նրան դիմավորել են ձիթենու կանաչ ոստերով, ինչը նկարագրում են բոլոր ավետարանիչները:

Ծաղկազարդի օրը՝ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ տեղի էր ունենում հանպատրաստի նշանադրություն: Փեսացուի մայրը, նախապես համաձայնեցրած լինելով հարսնացուի մոր հետ, վերցնում էր ուռենու ճյուղի վրա տեղադրված մոմերից մեկը, վառում այն, վրան հագցնում նշանդրեքի մատանին և հանձնում հարսնացուին: Հարսնացուն ընդունում էր մատանին և համարվում էր նշանված:Ժամասացության ավարտից հետո ժամավորները ջանում էին հնարավորինս շատ օրհնված ուռենու ճյուղեր տուն տանել, քանի որ ճյուղերին վերագրվում էր չարխափան և առատացնող զորություն, և դրանք օգտագործում էին տարբեր առիթներով՝ մինչև հաջորդ Ծաղկազարդը: Ծաղկազարդը մարդիկ անցնում էին գարնանային հագուստի:

Զատիկ, Սուրբ Հարություն

Հայոց բոլոր ազգագավառներում Զատիկ անունով հայտի տոնը համապատասխանում է եկեղեցական Սուրբ Հարություն տոնին և նշվում է գարնանային գիշերահավասարին հաջորդող լուսնի լրմանը հաջորդող առաջին կիրակի օրը, այսինքն մարտի 21-ից մինչև ապրիլի 25-ն ընկնող այն կիրակին, որը կհաջորդի առաջին լուսնի լրմանը: Զատիկի տոնի 35–օրյա շարժականությամբ են պայմանավորված տոնացույցի մյուս շարժական տոները, ինչպես Համբարձման, Պայծառակերպության (Վարդավառ) և այլն: Տոնի եկեղեցական անունը Հարություն, լիարժեք արտահայտում է գարնանային այս տոնի թե՛ եկեղեցական, թե՛ ժողովրդական բովանդակությունը: Ըստ եկեղեցական տոնացույցի այդ օրը տոնվում է Քրիստոսի հարություն առնելու հրաշքը: Ժողովրդական տոնահանդեսի հիմքում ընկած է այն իրողությունը, որ հայ ժողովուրդը, աշխարհի բազմաթիվ ժողովուրդների նման, վաղնջական ժամանակներից գարնանային գիշերահավասարին նշել է ձմռան ցրտերին հաջորդող բնության «հարությունը». վերազարթոնքը, կյանքի շարունակելիության ու հավերժության ամենամեծ խորհուրդը: Հնագույն ժամանակներում դա նաև տարեսկզբի նոր տարվա տոնն էր, քանզի տարվա սկիզբը համարվել է բնությամբ կարգավորվող «Սկիզբը»՝ սկիզբը կյանքի, սկիզբը զարթոնքի, սկիզբը գյուղատնտեսական-երկրագործական աշխատանքների, սկիզբը տնտեսական տարվա... Հետագայի տոմարական փոփոխությունները փոփոխություններ են բերել նաև տոնացույցում, սակայն բնության երևույթը նշելու ավանդականությունը գոյատևել է: Զատիկին նախորդող Ծաղկազարդի և Ավագ շաբաթվա տոնական հանդիսությունները հարություն առնող կյանքի խորհրդանշական հավաստումն էին, իսկ բուն Զատիկն արդեն զարթոնքի ու հարության կատարված փաստի արձանագրումը: Մեծ պասի ինքնամաքրումով մարդիկ նոր որակով, ֆիզիկապես ու բարոյապես մաքրված, նոր կյանք էին սկսում, և այդ նոր կյանքի խորհրդանշական մուտքը կատարվում էր հավերժության խորհրդանիշի ձվի ճաշակումով:

Զատիկի առավոտը բոլոր մարդկանց համար սկսվում էր թաթախումով, զարթոնքի խորհրդանշական կարմիրով ներկված ձվերը այդ օրվա տոնական սեղանների և տոնը շնորհավորելու միջոցների ոչ միայն բաղկացուցիչներն էին, այլև գլխավոր և անհրաժեշտ ուտեստի տարրը, որով «պասը բացում», թաթախվում էին և որը այնուհետև, երկու շաբաթ շարունակ, պետք է ուղեկցեր բոլոր խնջույքներին: Զատիկին ներկվող, թելերով փնջվող, ուլունքազարդ, նկարազարդվող և այլ ձևերով զարդարվող ձվերը, հիրավի. ժողովրդական ստեղծագործության, անսպառ երևակայության դրսևորման լավագույն ձևերից էին:Զարդարված ձվերը հարսնացուները նվեր էին ուղարկում փեսացուներին, ազգականները միմյանց, դրանցով զարդարում էին տոնականորեն հարդարված տները և այլն: Միաժամանակ տոնի ընթացքում ամենասիրված խաղերը ձվերի շուրջն էին ձվակռիվները, ձու գլորելը և այլն:

Տոնը շարունակվում էր երկու շաբաթ և այդ օրերին կարմիր ձվի կճեպներով ծածկվում էին բակերն ու փողոցները:

Պարապմունքի պլան

Թեման - <<Զատիկ>> Հարության տոն

Տեսակը - Զրույց

Նպատակը - Բացատրել ի՞նչ է նշանակում «Զատիկ» ընդլայնել երեխաների գիտելիքները նշված ազգային ծիսական տոնի մասին: Ամրապնդել երեխաների պատկերացումները նշված տոնի մասին:Գաղափար տալ այն մասին, որ «Զատիկը» նշում են միայն քրիստոնյաները: Բացատրել թե ինչ է նշանակում «Զատիկ»բառը հարստացնել բառապաշարը «Զատիկ»,«Ծես» ազգային բառերով:

Ընթացք - Երեխաների հետ «Տերունական աղոթքը» արտասանել: Ասել ինչպես են մարդիկ տոնում Սուրբ Զատիկը ,մինչ Զատիկը՝ տոնում ենք «բարեկենդանի» և «Ծառզարդ» տոները, որը կատարվում է Զատիկից առաջ և այն մեծ նշանակություն ունի մինչ սուրբ Զատիկը:Ինչ են պատրաստում և ինչպես են զարդարում սեղանները:

Անհրաժեշտ պարագաներ – Ունենալ համապատասխան նկարներ և պարագաներ նախատեսված պարապմունքի համար:

Տևողություն - 25 րոպե:

Հանդես՝

Զատիկ հարության տոն:

1. Տերունական աղոթք
2. Երգ «Թող հնչեն զանգերն ի լուր»
3. Հեղինակ - Հողմը փչեց ի հարավեն
Ազատվեցին դաշտի ձյուներեն
Բերկրություն է ամեն տեղոց
Քրիստոս հառյավ ի մեռելոց:
Առուները խոխոդեցին
Ծառերն ահա բողբոջեցին
Օդը լի է ձայնով թռչնոց
Քրիստոս հառյավ ի մեռելոց:

Պատասխանում է խումբը - Օրհնյալ է Հարությունն Քրիստոսի,մեզ և Ձեզ մեծ Ավետիս

Երեխա - «Գալիս է Զատիկն ու գնում, մեր ու մանուկ, արար աշխարհ Զ ատիկի բերած հրաշքից, արմանք ու զարմանք են կտրում»:

Խումբ - Զատիկն ասելա՝ հենց գամ արմանաս, հենց գնամ զարմանաս

Երգ - Բարով եկար այ՜ Զատիկ
Գարնան սիրուն խատուտիկ

Երեխա - «Բարի հրեշտակը»

Երեխա - «Բարի զվարթ փոքրիկ մանկիկ,
Ել ու երգիր,Քրիստոս հարյավ...»

Երեխա - Մարդիկ,հրեշտակներ աշխարհ բոլոր,
Կերգեն անուշ եղանակով,
Քրիստոս հարյավ, Քրիստոս հարյավ

Երեխա - Դա դեռ ի՞նչ է, դա դեռ ոչինչ,
Ահա լսում ենք զվարթ ծիծաղը
Անհոգ մանկան,որ ծնվել է
Գարնան թևով,թե լսում եք
Ու հաստատում, ուրոմն կա

Կա՜ հրաշք, որի անունն է «Հարություն»

Երգ - «Գարուն»

Երեխա - Գաթա, հալվա չամչով փլավ
Ձուկ, տապակած թարմ բանջար
Ուտելիքներն ես մեր սիրած,
Լավաշ հացով փաթաթված

Երգ - «Այյուր մաղել»

Երեխա - Հայ ընտանիքներում մեծ պասի օրերից սկսած
Հավաքել են հավի ձվեր,երեխաները խաղացել են՝ կարկաչա...
Օրհնել են ձվերը, ներկել ապա նվիրել են մեկը՝ մյուսին:

Երգ - Կարկաչա

Երգ- պար - Օր պար ճոր պար

Երեխա - Բուն բարեկենդանից անմիջապես հետո, մեծ պասի առաջին օռը
Հավի պոչի յոթը փետուրները գլուխ սոխի մեջ խրելով պատրաստել են
Ակլատիզ և գունազարդ թելերով կախել են երդիկից:

Երեխա - 7 շաբաթը լրանալուն պես պետուրները պոկվում են մեկ-մեկ
Վերջին 7-ռդ փետուրը կպոկվի Զատիկի շաբաթ օրը, կտոնվի
կարմիր Զատիկը:

Երգ - Ծաղկազարդ

Երեխա - «Նարեկ» աղոտք

Երգ - «Պահքի»

Երեխա- կարմիր ձու տուր, կարմիր օր տամ
Կարմիր ձուն Զատկին կսազե
Հենց սուվածանամ Զատկի պլավը միտս կբերեմ:

Երգ - «Չամչով փլավ»

Երեխա - Ես քեզ սիրում եմ իմ Տեր Աստված,ինչքան բարիքներ ունես ինձտված
Երկնքի ցողը, արևի շողը
Անուշ մայռիկիս սերն ու գորովը:

Երգ - «Այսոր մեզ մետ ո՞վ եկավ»

Պար- «Մայր աթոռ»

«Բարով եկար» երգի նվագակցությամբ երեխաները դահլիճից ծափերով դուրս են գալիս:

Տևողություն - 40 րոպե:

Եզրակացություն

Հայ ժողովուրդը հայտնի է իր հյուրընկալությամբ, ջերմությամբ և խաղաղությամբ: Հայերն աչքի են ընկնում նաև հարգալից վերաբերմունքով տարեցների նկատմամբ: Մեծահասակների դերը շատ է կարևորվում հատկապես ընտանիքում: Հայերն ավանդապաշտ ազգ են և ունեն բազում սովորույթներ, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ:

Ուսումնառությունը վերածելով հետևողական ակտիվ աշխատանքի մսուր-մանկապարտեզը դրանով իսկ պայմաններ կստեղծի ազգային ավանդույթներին և ծեսերին հետևող անձի ձևավորմանը,ինչը բոլոր ժամանակներում համարվել է ու համարվում է քրիստոնյա և հայ անձի ամենակարևոր որակը:

Երեխաներին ,եթե սովորեցնում ենք պարտադրաբար, նրան ուսման ազատություն,սխալվելու և սեփական սխալների վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս,երբեք նրանցից ինքնուրույն մարդ չի ձևավորվի:

Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ հետաքրքրությունը,չկա հետաքրքրություն ,չկա կայուն ուսումնադրդապատճառ,որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Յուրաքանչյուր պարապմունք պետք է իր մեջ պարունակի ինչ-որ բան,որը երեխայի մոտ կառաջացնի զարմանք և հիացմունք,այն,ինչը երկար կհիշվի՝կարող է լինել հետաքրքիր փաստ,անսպասելի բացահայտում:

Ծեսերի և ավանդույթների իմացությունների զարգացման նպատակով խորհուրդ է տրվում օգտագործել ուսուցման մեթոդներից՝ խոսքի զարգացումը,կերպարվեստը(ինտեգրված),երգ պարապմունքները,խաղերը և հանդեսները:

Պետք է ուշադրություն դարձնել այն գիելիքներին ու կարողություններին,որոնք ենթադրվում է,որ կիրառություն կգտնի հայ մարդու և քրիստոնյա անձի կյանքում:

Գրականության ցանկ

1.Մանկապարտեզի ավագ խմբի 5-6 տարկան կրտական համալիր ծրագիր

2. Ս. Բաղդասրյան, Մայրենի լեզվի ծրագրային նյութեր

3.Ս. Հովեյան , Հայկական Ազգային շարժախաղերը նախադպրոցական կրթական համակարգում

4. Վիքիպեդիա ազատ հանրագիտարան-
https://hy.wikipedia.org/wiki/%D4%B6%D5%A1%D5%BF%D5%AB%D5%AF